Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 88

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 07-025-0208-0004 կադաստրային ծածկագրով 4.8 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության համար 2018 թվականի ապրիլի 27-ի N 23-Ն ավագանու որոշմամբ հաստատված պարզեցված գլխավոր հատակագծի գոտևորման բաժնի՝ արտադրական գոտու (ԱԳ) համար սահմանված հարկայնության վերին սահման (10 մետր)	ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 07-025-0208-0004 կադաստրային ծածկագրով 4.8 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության համար սահմանել 2018 թվականի ապրիլի 27-ի N 23-Ն ավագանու որոշմամբ հաստատված պարզեցված գլխավոր հատակագծի գոտևորման բաժնի՝ արտադրական գոտու (ԱԳ) համար սահմանված հարկայնության վերին սահման (16 մետր)

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Նոր Հաճըն համայնքի Գետամեջ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 29 » «ապրիլի» 2022թ.